ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչություն

Սուրբ Էջմիածին - 2010

ՀՏԴ
ԳՄԴ
Պ –

Պ – ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒ-
ԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ – էջմիածին: Մայր
Աթոռ Սուրբ էջմիածին, 2010.– 64 էջ:

ISBN
© Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 2010 թ.

Հանդիսադիր Քհն. – Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն: Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Զսաղմոսերգութիւնս եւ զաղաչանս ընկալցի մարդասէրն Աստուած...

Երգչ. — *Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ ի յառագաստ անմատոյց լուսոյն, գերապանծ փառօք զդասս հրեղինաց։*

Անճառահրաշ զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական, եւ նազելի փառօք զգեստաւորեցեր ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց։

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա, եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութեան։

[Պտրգչ. — Ալէլուիա, ալէլուիա. լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղանով Քով, Տէր:

Սրկ. — *Դատ արա ինձ, Տէր, զի ես յամբծութեան իմում գնացի, ի Տէր յուսացայ, զի մի՛ եղէց հիւանդ։*

Պտրգչ. — Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Սրկ. — *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*]

Պտրգչ. – Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնի բարեխօսութեանն ...

Սրկ. – *Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուսցէ զարարածս Իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։*

Պտրգչ. – Ընկալ, Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին...

Հանդիսադիր Քհն. – Ողորմեսցի քեզ Աստուած Հզօրն ...

Պտրգչ. – Ազատեսցէ եւ զձեզ մարդասէրն Աստուած ...

Հանդիսադիր Քհն. – Յիշեսջիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Պտրգչ. – Յիշեալ լիջիք առաջի անմահ Որդւոյն Աստուծոյ:

Դպ. 1 — *Աղաղակեցէք առ Տէր, ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։*

Դպ. 2 — *Մտէք առաջի Նորա ցնծութեամբ, ծաներուք, զի Նա է Տէր Աստուած մեր։*

Դպ. 1 — *Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք, մեք ժողովուրդք եւ խաշն արօտի Նորա։*

Դպ. 2 — *Մտէք ընդ դրունս Նորա խոստովանութեամբ եւ օրհնութեամբ ի յարկս Նորա։*

Դպ. 1 — *Խոստովան եղերուք Տեառն եւ օրհնեցէք զանուն Նորա։*

Դպ. 2 — *Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն Նորա, յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն Նորա։*

Դպ. 1 — *Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։*

Դպ. 2 — *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Սրկ. — *Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։*

Պտրգչ. — Ի մէջ տաճարիս ...

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրկ. — *Դատ արա ինձ, Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում։*

Պտրգչ. — Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ փրկեա զիս:

Սրկ. — *Դու, Աստուած, հզօրիչ իմ ես, ընդէր մոռացար զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։*

Պտրգչ. — Առաքեա, Տէր, զլոյս Քո եւ զճշմարտութիւն Քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս Քո:

Սրկ. — *Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։*

Պտրգչ. — Խոստովան եղէց Քեզ օրհնութեամբ, Աստուած, Աստուած իմ:

Սրկ. — *Արդ, ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս, յուսա առ Աստուած, խոստովանեա Նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է։*

Պտրգչ. — Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Սրկ. — *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Օրհնեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան եւ երգել զերգս հոգեւորս։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցուսցէ եւ ողորմեսցի։*

Պտրգչ. — Ի յարկի Քում սրբութեան եւ ի տեղւոջս փառաբանութեան ...

[Եթե պատարագիչը եպիսկոպոս է, ծնրադրում է Ս. Սեղանի առաջ՝ անձայն ասելով Գրիգոր Նարեկացու աղոթքը՝ ուղղված Սուրբ Հոգուն, իսկ երգչախումբն այդ պահին սկսում է երգել **Ընտրեալդ յԱստուծոյ**-ն:

Երգչ. — *Ընտրեալդ յԱստուծոյ, ով երջանիկ սուրբ քահանայ։ Նմանեալ Ահարոնի եւ Մովսեսի մարգարէին, այնմ որ զգեստուցն էր յօրինող, զոր Ահարոն միշտ զգենոյր։ Յօրինէր զպատմուճանն, զոր ի չորից կազմեալ նիւթոց՝ ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանւոյ։ Թել զթելն յօրինէր, կարգն առաջին էր կարկեհան։ Եւ օծումն գրապանին շուրջանակի բոլորաշէն։ Եւ յընթացս գարշապարին հնչէր երկիր, ցնծայր խորանն։ Արդ ի նոյն նմանութիւն Քրիստոս զմեր Տէրս յօրինէ։*

Պատարագիչ եպիսկոպոսի լռելյայն աղոթքից հետո Խորանը փակվում է: Մինչ երգչախումբն սկսում է երգել օրվա մեղեդին, պատարագիչն անձայն կարդում է Հովհան Ոսկեբերանի կողմից գրված աղոթքը, որից հետո օրհնում է առաջադրության նշխարն ու գինին: Ապա սարկավագը ձայնում է.

Սրկ. —*Օրհնեա, տէր։*

Եպս. — Զի Քո է զթութիւն եւ կարողութիւն եւ մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:]

Ն Իսկ եթե պատարագիչը քահանա է, **Ի յարկի Քում սրբութեան**-ից հետո Խորանը փակվում է, և մինչ երգչախումբը երգում է օրվա մեղեդին, պատարագիչը լռելյայն կարդում է Գրիգոր Նարեկացու աղոթքը՝ ուղղված Սուրբ Հոգուն: Այնուհետև պատարագիչը շարունակում է անձայն կարդալ Հովհան Ոս-

կեբերանի կողմից գրված աղոթքը, ապա օրհնում է առաջադրության նշխարն ու գինին:

Վերոհիշյալ աղոթքից հետո վարագույրը բացվում է, և երգչախումբն սկսում է երգել Աշխարհ գալոց-ի շարականը՝ **Քարեխօսութեամբ**-ը:

Կ

Բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից, որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զԵկեղեցի արեամբ քո Քրիստոս, եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց եւ մարգարէից, սուրբ վարդապետաց։

Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց խունկ մատուցանեմք առաջի քո, Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ։ Ընկալ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զՆոյի եւ զԱբրահամու։

Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայս։

Մինչ նրանք երգում են, պատարագիչը խնկարկելով դառնում է Ս. Սեղանի շուրջը և թափորի առաջնորդությամբ հյուսիսային աստիճաններով իջնում ներքև՝ խնկարկելու եկեղեցականներին և ներկա ժո-

ղովրդին: Եկեղեցում խնկարկությունից հետո պատարագիչը հարավային աստիճաններով դպիրների և սարկավագների հետ կրկին բարձրանում է Խորան և երկրպագում Ս. Սեղանին:

Սրկ. — *Օրհնեա, տէր:*

Պտրգչ. — Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ...

Ժամամուտի օրհնակ

(Հարության ժամամուտ)

Դպիր — *Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն: Անփոփոխելիդ մարդ եղեալ՝ խաչեցար, Քրիստոս Աստուած մեր, մահուամբ զմահ կոխեցեր: Մինդ ի Սրբոյ Երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:*

Սրկ. — *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո եւ ողորմեա: Օրհնեա, տէր:*

Պտրգչ. — Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ...

Երգչ. — *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. — *Աստուծոյ երկիրպագեսցուք։*

Երգչ. — *Առաջի Քո, Տէր։*

Պտրգչ. — Տէր Աստուած մեր ...

Հաշու սաղմոսի օրինակ
(ասվում է Հարության կիրակիներին)

Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն, ընդ մէջ Իւր էած։

Հաշու շարականի օրինակ
(Հարության շարական ԱՁ)

Զթագաւորն փառաց Քրիստոս, որ վասն մեր մարմնացաւ ի սրբոյ Կուսէն եւ խաչի համբերելով, միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։

Որ զթաղումն երեքօրեայ յանձն էառ՝ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ, միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց, եկեղեցւոյ Իւրում զգեցոյց զմեծ վայելչութիւն, միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։

Պտրգչ. – Զի Քո է կարողութիւն եւ զօրութիւն ...

Սրկ. – *Պռօսխումէ։*

Երգչ. –*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց* (կամ՝ հավուր պատշաճի)*, ողորմեա մեզ* (երեք անգամ կրկնի՛ր)։

Ն Սրկ. – *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. – *Տէր, ողորմեա։*

Սրկ. – *Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. – *Տէր, ողորմեա։*

Սրկ. – *Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. – *Տէր, ողորմեա։*

Սրկ. — *Վասն հայրապետին մերոյ Տեառն Տեառն* (այս անուն) *սրբազնագոյն կաթողիկոսին կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. — *Տէր, ողորմեա։*

Սրկ. — *Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց, եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. — *Տէր, ողորմեա։*

Սրկ. — *Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. — *Տէր, ողորմեա։*

Սրկ. — *Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. — *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։ Տէր, ողորմեա։ Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։ Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա։*

Պտրգչ. – Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած զոլով ...

Այնուհետև եկեղեցականներից մեկն սկսում է ընթերցել մարգարեական և առաքելական գրքերից, որի ավարտին բուրվառակիր սարկավագը ձայնում է.

Ս Սրկ. – *Ալէլուիա, օրթի։*

Պտրգչ. – † Խաղաղութիւն ամենեցուն:

Երգչ. – *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. – *Երկիւղածութեամբ լուարուք։*

Վերաբերում անող սարկավագն սկսում է կարդալ օրվա Ավետարանը.

Սրկ. – *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ ...*

Երգչ. – *Փառք քեզ, Տէր Աստուած մեր։*

Բուրվառակիր սարկավագը ժողովրդին ուշադրության կոչ է ուղղում.

Սրկ. – *Պռոսխումէ։*

Երգչ. – *Ասէ Աստուած։*

Ավետարանի ընթերցումից հետո երգչախումբը երգում է.

Երգչ. – *Փառք քեզ, Տէր Աստուած մեր։*

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿ

Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ Միածին, այսինքն՝ յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած։ Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք։

Որ յաղագս մեր մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։

Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։

Զարշարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս։

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի։

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։

Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս։

Սրկ. — *Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի։*

Պտրգչ. — Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս ...

Սրկ. — *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. — *Տէր, ողորմեա։*

Սրկ. — *Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր։*

Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի Տէրութեան Նորա։ Եւ Նա տացէ մեզ միաբան միով հաւատով եւ արդարութեամբ վաստակել ի գործս բարեաց, զի զողորմութեան զշնորհս Իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի։

Երգչ. — *Կեցո, Տէր։ Շնորհեա, Տէր։ Շնորհեա, Տէր։ Շնորհեա, Տէր։ Շնորհեա, Տէր։ Տէր, ողորմեա։ Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։ Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա։*

Պտրգչ. — Որպէս զի արժանաւոր եղիցուք գոհութեամբ փառաւորել ...

Երգչ. — *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. — *Աստուծոյ երկիրպագեսցուք։*

Երգչ. — *Առաջի Քո, Տէր։*

Պտրգչ. — Խաղաղութեամբ Քով, Քրիստոս Փրկիչ մեր ...

Սրկ. — *Օրհնեա, տէր։*

Պտրգչ. — Տէր Աստուած † օրհնեսցէ զամենեսեանդ:

Երգչ. — *Ամէն:*

Սրկ. — *Մի ոք յերախայից, մի ոք ի թերահաւատից, եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:*

Երգչ. — *Մարմին տէրունական եւ Արիւն փրկչական կայ առաջի: Երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց:*

Սրկ. — *Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:*

Սրբասացության օրինակ

(երգվում է Կիրակի օրերին, Ծաղկազարդին, Եկեղեցու և Հրեշտակների տոներին).

Երգչ. — *Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր, Աստուած, զՔո սուրբ զե-*

կեղեցի։ Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի Քո, եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն զՔեզ, Տէր, եւ ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաւ՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց։

Ա/Կ

Մինչ երգչախումբը երգում է օրվա սրբասացությունը, վերաբերում անող սարկավագն ընծայարանից վերցնում է սկիհը և բուրվառակիր սարկավագի, մոմակիրների ու քշոցակիրների ուղեկցությամբ մոտենում է պատարագչին ու ասում.

Սրկ. — *Համբարձէք, իշխանք, զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց։*

Պտրգչ. — Ո՞վ է Սա Թագաւոր փառաց ...

Սրկ. — *Համբարձէք, իշխանք, զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց։*

Պտրգչ. — Ո՞վ է Սա Թագաւոր փառաց ...

Սրկ. — *Սա Ինքն է Թագաւոր փառաց։*

Պատարագիչը, սարկավագի ձեռքից ընդունելով սկիհը, դրանով խաչակնքում է ժողովրդի վրա՝ ասելով.

Պտրգչ. – † Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն ...

Ս

Սրկ. – *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. – *Տէր, ողորմեա։*

Սրկ. – *Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ։ Մի խղճիւ եւ գայթակղութեամբ, մի նենգութեամբ եւ խորամանկութեամբ, մի պատրանօք եւ խաբէութեամբ, մի երկմտութեամբ եւ մի թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, եւ գտցուք զողորմութեան զշնորհս յաւուր յայտնութեան եւ ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ եւ*

Փրկչին Յիսուսի Քրիստոսի. կեցուսցէ եւ ողորմեսցի։

Երգչ. — *Կեցո, Տէր, եւ ողորմեա։*

Պտրգչ. — Շնորհօք եւ մարդասիրութեամբ ...

Երգչ. — *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. — *Աստուծոյ երկիրպագեսցուք։*

Երգչ. — *Առաջի Քո, Տէր։*

Սրկ. — *Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան, եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք։*

Երգչ. —*Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,*
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ,
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջունի հրաման տուաւ։
Եկեղեցիս մի անձն եղեւ,
Համբոյրս յօդ լրման տուաւ,
Թշնամութիւնն հեռացաւ,
Սէրն յընդհանուրս սփռեցաւ։

Արդ, պաշտօնեայք, բարձեալ զձայն
Տուք զօրհնութիւն ի մի բերան
Միասնական Աստուածութեանն,
Որում սրովբէքն են սրբաբան։

Տաղավար կամ հանդիսավոր տոներին այս հավելումն է արվում.

Սրկ. — *Որք հաւատով կայք յանդիման սուրբ սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ զՔրիստոս Արքայն, եւ շուրջ պատեալ զօրք վերնականք։*

Երգչ. — *Վեր համբառնամք զաչս ունելով եւ պաղատիմք զայս ասելով, զմեղս մեր մի յիշեսցես, այլ գթութեամբ քով քաւեսցես։ Ընդ հրեշտակացն օրհնեմք զՔեզ, եւ ընդ սրբոց Քոց, Տէր, փառք Քեզ։*

Սրկ. — *Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք, եւ նայեցարուք զգուշութեամբ։*

Երգչ. — *Առ Քեզ, Աստուած։*

Սրկ. — *Պատարագ Քրիստոս մատչի անարատ Գառն Աստուծոյ։*

Երգչ. — *Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան։*

Պտրգչ. — Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն ...

Երգչ. — *Ամէն։ Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. — *Զդրունս, զդրունս, ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ։*

Երգչ. — *Ունիմք առ Քեզ, Տէր ամենակալ։*

Սրկ. — *Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ։*

Երգչ. — *Արժան եւ իրաւ։*

Պտրգչ. — Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն ...

Երգչ. — *Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք Քո։ Օրհնութիւն ի բարձունս։ Օրհնեալ որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն։ Ովսաննա ի բարձունս։*

Պտրգչ. – Առէք, կերէք, այս է ՄԱՐՄԻՆ ԻՄ ...

Երգչ. – *Ամէն։*

Պտրգչ. – Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է ԱՐԻՒՆ ԻՄ ՆՈՐՈՅ ՈՒԽՏԻ ...

Երգչ. – *Ամէն։ Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր պարտապան պարտեացս մերոց։ Հեղմամբ արեան Նորա, աղաչեմք զքեզ, ողորմեա քո բանաւոր հօտի։*

Պտրգչ. – Եւ զՔոյս ի Քոյոց Քեզ մատուցանեմք ...

Երգչ. – *Յամենայնի օրհնեալ ես, Տէր, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր։*

Պտրգչ. – † Խաղաղութիւն ամենեցուն:

Երգչ. – *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. – *Աստուծոյ երկիրպագեսցուք։*

Երգչ. – *Առաջի քո, Տէր։ Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ։ Հեղ-*

մամբ արեան Քո սուրբ, աղաչեմք զՔեզ, ողորմեա արեամբ Քով փրկեալ հօտի։

Պտրգչ. – Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս ...

Երգչ. – *Հոգի Աստուծոյ, որ զփառակցի Քո զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռն մեր: Հեղմամբ արեան Սորա, աղաչեմք զՔեզ, հանգո զհոգիս մեր ննջեցելոցն։*

Ե Պտրգչ. – Ընդ որս եւ մեզ այց արասցես ...

Երգչ. – *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։*

Պտրգչ. – Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու ...

Երգչ. – *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։*

Սրկ. – *Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, եւ ամենայն հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։*

Երգչ. — *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։*

Սրկ. — *Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ Յարութեանն* (կամ՝ Տէրութեանն) *Քրիստոսի Աստուծոյ մերոյ երկիրպագանեմք։*

Երգչ. — *Փառք Յարութեան* (կամ՝ Տէրութեան) *Քո, Տէր։*

Սրկ. — (Սուրբերի տոնին) *Սուրբ եւ աստուածահաճոյ մարգարէին* (առաքելոյն, հայրապետին, մարտիրոսին), *որոյ այսօր զյիշատակն կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։*

Երգչ. — *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։*

Սրկ. — *Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի առաքելոցն, եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սա-*

հակայ, Դանիէլի եւ Խադայ, Մեսրոպայ վարդապետին եւ Գրիգորի Նարեկացուոյն, եւ Ներսիսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, եւ Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեացն, եւ սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, հովուաց եւ հովուապետացն Հայաստանեայց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։

Երգչ. — Յիշեա, Տէր, եւ ողորմեա։

Սրկ. — Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորացն՝ Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, Աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսենի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց եւ Սիմոնեանց, սրբոց Ոսկեանց եւ Սուքիասեանց, եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։

Երգչ. — Յիշեա, Տէր, եւ ողորմեա։

Սրկ. — *Թագաւորացն հաւատացելոց՝ սրբոց Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ եւ Թէոդոսի, եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։*

Երգչ. — *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։*

Սրկ. — *Ընդհանուր ամենայն հաւատացելոց՝ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ ամենայն չափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։*

Երգչ. — *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։* Կ

Պտրգչ. — Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր եւ զպատուական հայրապետն ամենայն Հայոց զՏէր Տէր (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսն, եւ (վիճակիս) *զբարեխնամ առաջնորդն զՏէր* (այս անուն) *սրբազան (արք)եպիսկոպոսն,*

շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ։

Երգչ. — *Ամէն։*

Պտրգչ. — Նաեւ զՀանրապետութիւն Հայաստան աշխարհիս եւ զժողովուրդն Հայոց զօրացուսցես եւ պահպանեսցես յամայր ամս ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ Քո ի շինութեան, ի խաղաղութեան եւ յանսասանութեան:

Երգչ. — *Ամէն։*

Ն Սրկ. — *Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք Քեզ, Տէր Աստուած մեր, վասն սուրբ եւ անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես։ Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զբղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ Եկեղեցւոյ, եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական հայրապետին ամենայն*

Հայոց Տեառն Տեառն (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսին, եւ (վիճակիս) բարեխնամ առաջնորդին Տեառն (այս անուն) սրբազան (արք)եպիսկոպոսին, եւ քահանայիս որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից աղաչեսցուք, եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց, եւ շինողաց սրբոյ Եկեղեցւոյս եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ:

Ազատութիւն՝ եղբարց մերոց գերելոց, եւ շնորհ՝ առաջիկայ ժողովրդեանս, հանգիստ՝ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Երգչ. — Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Պտրգչ. – Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ ...

Երգչ. – *Ամէն։ Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. – *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. – *Տէր, ողորմեա։*

Սրկ. – *Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք, եւս առաւելապէս զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. – *Տէր, ողորմեա։*

Սրկ. – *Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. – *Տէր, ողորմեա։*

Սրկ. – *Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի Իւր մատուցարանն, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. — *Տէր, ողորմեա։*

Սրկ. — *Ընկալ, կեցո եւ ողորմեա, եւ պահեա զմեզ, Տէր, քոյին շնորհիւդ։*

Երգչ. — *Կեցո, Տէր, եւ ողորմեա։*

Սրկ. — *Զամենասրբուհի զԱստուածածին զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք։*

Երգչ. — *Յիշեա, Տէր, եւ ողորմեա։ Տէր, ողորմեա։ Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։ Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա։*

Այնուհետև պատարագիչը հավուր պատշաճի քարոզ է խոսում, որի ավարտին ասում է.

Պտրգչ. — Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր ...

Կ

Երգչ. — *ՀԱՅՐ մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ*

յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ։

Պտրգչ. – Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս ...

Երգչ. – *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. – *Աստուծոյ երկիրպագեսցուք։*

Երգչ. – *Առաջի Քո, Տէր։*

Պտրգչ. – Քրիստոսի Յիսուսի՝ Տէրամբ մերով ...

Ծ/Կ Սրկ. – *Պռոսխումէ։*

Պտրգչ. – Ի Սրբութիւն Սրբոց:

Երգչ. – *Միայն Սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր. ամէն։*

Պտրգչ. – Օրհնեալ Հայր Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Երգչ. – *Ամէն։*

Պտրգչ. – Օրհնեալ Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Երգչ. – *Ամէն։*

Պտրգչ. – Օրհնեալ Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Երգչ. – *Ամէն։*

Պտրգչ. – Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ...

Երգչ. – *Ամէն։ Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ։ Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Պտրգչ. – Ի սուրբ, ի սուրբ, պատուական Մարմնոյ եւ յԱրենէ Տեառն մերոյ ... Ծ/Կ

Երգչ. – *Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա։*

Սրկ. – *Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա։*

Երգչ. – *Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն։*

Սրկ. — *Եւ հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն։*

Երգչ. — *Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա։*

Սրկ. — *Միջնորդութեամբ սուրբ եւ անմահ եւ կենարար պատարագիս։*

Երգչ. — *Ընկալ, Տէր, եւ ողորմեա։*

Սրկ. — *Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս, զի Սմա վայելեն սաղմոսք եւ օրհնութիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք։ Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք, եւ զՏէր յերկինս օրհնեցէք։*

Երգչ. — *Օրհնեալ է Աստուած. Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում, ալէլուիա։*

ԶՄարմին Իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զԱրիւն Իւր ցօղէ ի մեզ, ալէլուիա։

Մատիք առ Տէր եւ առէք զլոյս, ալէլուիա։

Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր, ալէլուիա։

Օրհնեցէք զՏէր յերկինս, ալէլուիա։

Օրհնեցէք զՆա ի բարձունս, ալէլուիա։

Օրհնեցէք զՆա, ամենայն հրեշտակք Նորա, ալէլուիա։

Օրհնեցէք զՆա, ամենայն զօրութիւնք Նորա, ալէլուիա։ Կ

Սրկ. — *Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք։*

Ս. Հաղորդության ժամանակ երգչախումբն սկսում է երգել **Որ կազմեցեր** շարականը.

Երգչ. — *Որ կազմեցեր սեղան խորհրդոյ եւ արբուցեր յանմահական բաժակէն սրբոց Քոց առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն։ Աղաչեմք, Փրկիչ, ողորմեա։*

Ս. Հաղորդության ավարտին երգչախումբը երգում է.

Երգչ. — *Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։*

Պտրգչ. — Կեցո, Տէր, զժողովուրդս Քո ...

Ե Երգչ. — *Լցաք ի բարութեանց Քոց, Տէր, ճաշակելով զՄարմին Քո եւ զԱրիւն: Փառք ի բարձունս Կերակրողիդ զմեզ: Որ եւ հանապազ կերակրես զմեզ, առաքեա ի մեզ զհոգեւոր Քո զօրհնութիւն: Փառք ի բարձունս Կերակրողիդ զմեզ:*

Սրկ. — *Ամէն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Երգչ. — *Տէր, ողորմեա:*

Սրկ. — *Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ անապական խորհրդոյս զՏեառնէ գոհացարուք:*

Երգչ. — *Գոհանամք զՔէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ Քո՝ բաշխելով զՄարմինդ եւ զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:*

Սրկ. — *Օրհնեա, տէր:*

Պտրգչ. – Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զՔեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի Քեզ:

Երգչ. – *Օրհնեալ է Աստուած:*

Պտրգչ. – Կեցո զժողովուրդս Քո եւ օրհնեա զժառանգութիւնս Քո ...

Երգչ. – *Ամէն:*

Պտրգչ. – Սրբեա զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան Քո ...

Երգչ. – *Ամէն:*

Պտրգչ. – Զխաղաղութիւն պարգեւեա ամենայն աշխարհի ...

Երգչ. – *Ամէն:*

Պտրգչ. – Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ...

Երգչ. – *Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան* (երեք անգամ կրկնիր):

Պտրգչ. – Եղիցի, եղիցի եւ եղիցի: Կատարումն Օրինաց եւ Մարգարէից ...

Սրկ. – *Օրթի:*

Կ

Պտրգչ. – † Խաղաղութիւն ամենեցուն:

Երգչ. – *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. – *Երկիւղածութեամբ լուարուք:*

Պտրգչ. – Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:

Երգչ. – *Փառք քեզ, Տէր Աստուած մեր:*

Սրկ. – *Պռօսխումէ:*

Երգչ. – *Աւէ Աստուած:*

Պատարագիչն սկսում է ընթերցել արձակման Ավետարանը (Հովհ. Ա 1-14):

Պտրգչ. – Ի Հօրէ Լուսոյ:

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ Նովաւ եղեւ, եւ առանց Նորա եղեւ եւ ոչինչ, որ ինչ եղեւն:

Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան: Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար Նմա ոչ եղեւ հասու:

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկա-

յութիւն, զի վկայեսցէ վասն Լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն Նովաւ: Ոչ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն:

Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ Նովաւ եղեւ, եւ աշխարհ զՆա ոչ ծանեաւ:

Յիւրսն եկն, եւ իւրքն զՆա ոչ ընկալան: Իսկ որք ընկալանն զՆա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատասցեն յանուն Նորա: Այք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան:

Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս Նորա, զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ՝ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

Սրկ. — *Փառք քեզ, Տէր Աստուած մեր։ Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։*

Պտրգչ. – Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր ...

Երգչ. – *Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն Նորա ի բերան իմ։*

Հանդիսադիր Քհն. – † Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն ...

Ս. Պատարագի ավարտին ժողովուրդը մոտենում է պատարագչին՝ Ավետարանը համբուրելու և ասելու. *«Յիշեսցէ Տէր զամենայն պատարագս քո, և զուխտս քո ընդունելի արասցէ» (Սաղմ. ԺԹ 4), որին ի պատասխան պատարագիչն ասում է.* «Տացէ քեզ Տէր ըստ սրտի քում, և զամենայն խորհուրդս քո Նա կատարեսցէ» *(Սաղմ. ԺԹ 5)։*

ՊԱՇՏՕՆ ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ

Հանդիսադիր Քհն. – Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես ...

Սրկ. – *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո եւ ողորմեա:*

Հանդիսադիր Քհն. – Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ...

Երգչախումբն սկսում է երգել Հանգստյան շարական Բկ.

Երգչ. – *Որ յանէից ստեղծող գոյից, արարչակից Հօր Բանդ Աստուած, թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:*

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Որ ի խաչին անշնչացար, զմահու լուծեր զիշխանութիւն, թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր։

Կամ՝ Հանգստյան շարակն ԴՁ.

Գթա, Տէր, ի հոգիս մեր ննջեցելոցն եւ յիշեա ողորմութեամբ, քանզի գինք սուրբ արեան քո են. ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն եւ կան առաջի ահաւոր քո բեմին։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զլուսաւորեալքս ծննդեամբ սուրբ աւազանին մի բարկութեամբդ խրատեր, եւ մի սրտմտութեամբդ քով յանդիմաներ, ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն եւ կան առաջի ահաւոր քո բեմին։

Սրկ. — *Ալէլուիա, ալէլուիա։ Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր։ Տէր, լուր ձայնի իմում։ Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։*

Սրկ. — *Ալէլուիա, օրթի։*

Հանդիսադիր Քհն. — † Խաղաղութիւն ամենեցուն:

Երգչ. — *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. — *Երկիւղածութեամբ լուարուք։*

Պտրգչ. — Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:

Երգչ. — *Փառք քեզ, Տէր Աստուած մեր։*

Սրկ. — *Պռօսխումէ։*

Երգչ. — *Ասէ Աստուած։*

Պտրգչ. — Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն, ամէն ասեմ ձեզ ...

Երգչ. — *Ի վերինն Երուսաղէմ, ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ ի*

դրախտին Եդեմական՝ պայծառացեալ արժանապէս. ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց։

Հանդիսադիր Քհն. – Հոգւոցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած ...

Սրկ. – *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զՓրկիչն մեր Քրիստոս, զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ, եւ զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։*

Պտրգչ. – Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա:

Քրիստոս, Որդի Աստուծոյ ...

Սրկ. – *Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։*

Պտրգչ. – Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր ...

Հանդիսադիր Քհ. – Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես ...

Երգչ. – *Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։*

Հանդիսադիր Քհ. – † Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն ...

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
(Համառոտ բացատրություն)

Ս. Պատարագի խորհուրդը Վերջին ընթրիքի ժամանակ հաստատվեց Աստվածորդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի կողմից: Ս. Պատարագը մարմնացյալ Բանն Աստծո ինքնակամ զոհաբերության խորհուրդն է՝ աստվածային սիրո մեջ իրականացած: Ս. Պատարագի ընթացքում Հայր Աստված սրբագործված հացն ու գինին Սուրբ Հոգու ներգործությամբ փոխակերպում է Իր Միածին Որդու Մարմնին և Արյանը, որը բաշխվում է Եկեղեցում հավատքով և երկյուղածությամբ ներկա գտնվող ժողովրդին:

Պատարագ նշանակում է նվեր, ընծա, ինպես նաև՝ զոհաբերություն, իսկ Ս. Պատարագ՝ սուրբ և սրբագործող զոհաբերություն: Ս. Պատարագի արարողության գիրքը կոչվում է Պատարագամատույց կամ Խորհրդատետր: Հայտնի են Աթանաս Ալեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի և այլոց Հեղինակած Պատարագամատույցները: Հայ պատմիչների վկայության համաձայն, Հայ Եկեղեցում գործածական են եղել Աթանասյան և Բարսեղյան Պատարագամատույցները, որոնցից առաջինն

է, որ ավելի տարածվելով Հայոց մեջ՝ դարերի ընթացքում զարգացել ու ճոխացվել է Հայ եկեղեցական Հայրերի կողմից (Ներսես Շնորհալի, Գրիգոր Նարեկացի և այլք)։

Ս. Պատարագի խորհուրդը «ըստ Հայոց Պատարագամատույցի» բաժանվում է Հետևյալ մասերի. ա. Պատրաստություն, բ. Ճաշու պաշտոն, գ. Ս. Պատարագի կանոն, դ. Արձակում։

Ա. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Զգեստավորում, լվացում

Ս.Պատարագի առաջին՝ Պատրաստության մասն սկսվում է զգեստավորման արարողությամբ։ Քահանայի՝ ավանդատուն մտնելը, սև պքեմը հանելը և պայծառ գույներով զգեստներ հագնելը խորհրդանշում են հին, մեղավոր մարդուց մերկանալը և Քրիստոսով նորոգվելն ու լուսավորվելը։ Զգեստավորվելուց հետո պատարագիչը՝ դպիրների ու սարկավագների ուղեկցությամբ, Խորհուրդ խորին շարականի երգեցողության ներքո, դուրս է գալիս ավանդատնից և շարժվում ատյան։ Ս. Խորանի առաջ պատարագիչը լվանում է ձեռքերը՝ սարկավագի հետ գրեթե անձայն փոխասելով 25-րդ սաղմոսը։ Լվացումը խորհրդանշում է մարմնի, հոգու և մտքի

մաքրությունը՝ շեշտելով սրբության կարևորությունը Ս. Խորհրդի մասնակցության համար։

Խոստովանություն

Լվացումից հետո պատարագիչը, դառնալով դեպի հանդիսադիր քահանան և ժողովուրդը, խնդրում է, որ Աստված Ս. Աստվածածնի և բոլոր սուրբերի բարեխոսությամբ ընդունի իր աղոթքները։ Ապա պատարագիչը հրապարակայնորեն խոստովանում է իր մեղանչական լինելը՝ խնդրելով, որ հանդիսադիր քահանան և հավատացյալ ժողովուրդն աղոթեն իր գործած մեղքերի համար՝ Աստծուց թողություն ստանալու համար։

Նախամուտ

Խոստովանելուց հետո պատարագիչը սաղմոսերգությամբ բարձրանում է Ս. Խորան։ Վարագույրը փակվում է, և երգչախումբը երգում է օրվան պատշաճ մեղեդի, իսկ պատարագիչն անձայն ընթերցում է Գրիգոր Նարեկացու աղոթքը՝ ուղղված Սուրբ Հոգուն։ Այս աղոթքով պատարագիչը հայցում է Սուրբ Հոգու օգնությունը՝ սրբազան Խորհուրդը կատարելու համար։

Առաջադրություն

Աղոթքից հետո քահանան օրհնում է նվիրական հացը կամ նշխարը և գինին՝ նշխարը դնելով մաղզմայի վրա, իսկ գինին խաչաձև լցնելով սկիհի մեջ: Սրան հաջորդում է Հովհան Ոսկեբերանի աղոթքը՝ ուղղված Հայր Աստծուն, հավարտ որի պատարագիչը ծածկում է սկիհը: Վարագույրը բացվում է, և սկսվում է խնկարկությունը:

Բ. ՀԱՇՈՒ ՊԱՇՏՈՆ

Պատարագիչը բուրվառով խնկարկում է Ս. Սեղանը, Ընծայարանը, որտեղ պահվում է սկիհը, Խորանը սպասարկող սարկավագներին ու դպիրներին և խնկարկելով իջնում հյուսիսային աստիճաններից: Բարեխօսութեամբի երգեցողության ներքո պատարագիչը թափորով շրջում է ժողովրդի մեջ և օրհնում նրանց: Հավատացյալներն իրենց հերթին խնդրում են, որ պատարագիչը հիշի իրենց Ս. Խորանի վրա՝ Աստծո անմահ Գառան՝ Տեր Հիսուս Քրիստոսի առջև: Այնուհետև թափորը հարավային աստիճաններով բարձրանում է Ս. Խորան:

Ժողովրդի մեջ պատարագչի մուտքը հայտնի է Աշխարհգալոց անվամբ, որը խորհրդանշում է Բանն Աստծո մարդեղացումը՝

երկնքից երկիր էջքը, աստվածային ավետիսը փոխանցելու և Հանուն մարդկության փրկության երկնային արքայության բարի լուրը մարդկանց քարոզելու:

Երեքսրբյան փառաբանություն

Ժամամուտից հետո, երբ երգվում է օրվան պատշաճ շարականը, պատարագիչն անձայն աղոթքով հրեշտակային դասի աջակցությունն է խնդրում Ս. Պատարագին իր սպասավորությունը կատարելու և այն ավարտին հասցնելու համար: Այնուհետև պատարագիչը, Ավետարանը բարձրացնելով, համբուրում և ի տես ժողովրդի այն տալիս է սարկավագին, ով աջակողմյան դասից Ս. Սեղանի հետնամասով անցնում է ձախակողմյան դաս: Այս ընթացքում երգչախումբը երգում է հավուր պատշաճի Երեքսրբեանը՝ «**Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ ...**», որն ուղղված է Աստծո Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Երեքսրբեանից հետո սկսվում է սարկավագի Համաշխարհական քարոզը, ուր Նա Տիրոջից խաղաղություն է խնդրում ողջ աշխարհի համար՝ հորդորելով եկեղեցում ներկա հավատացյալներին աղոթելու կաթողիկոսի, եպիսկոպոսների, հոգեւորականաց դասի և համայն ժողովրդի համար: Քարոզի ավարտին սարկավագը հիշատակում է նաև ի Քրիստոս

ննջեցյալներին, ովքեր անբաժան են Ընդհանրական Եկեղեցուց:

Ընթերցանություն

Սկսվում է ընթերցանության պահը: Ատյանում կարդացվում են հատվածներ մարգարեական գրքերից և առաքելական թղթերից, որին հաջորդում է Ավետարանի ընթերցանությունը՝ Ս. Խորանից: Հին Կտակարանում մարգարեները կանխատեսել էին Հիսուս Քրիստոսի աշխարհ գալը, իսկ Նոր Կտակարանում մարգարեությունների իրականացման ականատեսները դարձան Տիրոջ առաքյալները, ովքեր լսեցին, տեսան և իրենց ձեռքերով շոշափեցին Կենաց Բանը (տե՛ս Ա Հովհ. Ա 1): Ավետարանական ընթերցանությունից հետո սարկավագը՝ Ավետարանը վեր պահած, շրջվում է դեպի Ս. Սեղան, և բոլորը՝ թե՛ Ս. Սեղանի սպասարկողները, թե՛ ներկա ժողովուրդը, ձեռնամած երգում են Հաւատամքը՝ *մեր հավատի խոստովանությունը:*

Գ. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՆՈՆԸ

Վերաբերում

Պատարագիչը հանում է սաղավարտն ու հողաթափերը, ինչը մեծ և խորհրդանշական

իմաստ ունի. եթե մինչ այդ պատարագիչն իր մեջ ուներ Հիսուս Քրիստոսի իշխանական փառքը, այս պահից սկսած նա այլևս մտնում է ծառայական կերպի մեջ՝ դառնալով աստվածային փրկչարար Խորհրդի սպասավորը։ Պատարագչի աղոթքները, որ մինչ այդ ուղղված էին Որդի Աստծուն, այս պահից սկսած ուղղվում են Հայր Աստծուն՝ իբրև գործակից խնդրելով Հոգի Աստծուն. մոտենում է պահը, երբ Որդին Աստված՝ Հիսուս Քրիստոս, պատարագվելու է Ս. Սեղանի վրա։

Սարկավագը խնկարկում է Ս. Սեղանին և մոտենում Ընծայարանին, որտեղ դրված են օրհնված հացն ու գինին։ Հնչում են քշոցները, դպիրները երգում են օրվան համապատասխան սրբասացությունը, իսկ պատարագիչն անձայն աղոթքով բազկատարած խնդրում է, որ Աստված զորացնի իրեն՝ ընծաները մատուցելու և Ս. Խորհուրդը կատարելու։ Պատարագիչը, ընդունելով ընծաները՝ օրհնված հացն ու գինին, օրհնում է ժողովրդին և ապա շրջվելով՝ դրանք դնում է Ս. Սեղանի վրա։

Ողջույն

Սարկավագը քարոզում է, որ ժողովուրդը Ս. Հաղորդության մոտենալուց առաջ մաքրի իր միտքն ու հոգին բազմատեսակ աղտեղություններից՝ կատարյալ հավատով և

սիրով ճաշակելու Տիրոջ Ս. Մարմինն ու Արյունը: Պատարագիչը լռելյայն աղոթում է, որ Աստված իր ձեռքից ընդունի ընծաները՝ այն դարձնելով մեղքերի թողության դեղ Իր Միածին Որդու Մարմինն ու Արյունը ճաշակողների համար:

Այնուհետև սարկավագը կոչ է անում հավատացյալներին՝ ողջունելու իրար սուրբ համբույրով՝ ասելով. «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան», որով և սկսվում է ողջույնի պահը: Պատարագիչը սկիհի քողը կիսով չափ բացում է, որպեսզի նշխարը փոքրինչ երևա, և դիմում է իրեն մոտեցող սարկավագին՝ ասելով. «Ողջոյն քեզ, Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», որին հետևում է սարկավագի պատասխանը. «օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի», և երգչախումբն սկսում է երգել «**Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ**» երգը: Նույն խոսքերով էլ հավատացյալները, ատյանում գտնվող հոգևորականներից ողջույն ստանալով, միմյանց են ողջույն փոխանցում: Մեր Եկեղեցում «համբոյր սրբութեանը» փոխանցում են աջ և ձախ այտերն իրար մոտեցնելով և ասելով՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», իսկ ողջույնն ընդունողն ասում է՝ «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»:

Սրբասացություն

Ողջույնին հետևում է սարկավագի կոչը, որ զգուշացնում է հավատացյալներին երկյուղով սպասել, քանի որ մոտենում է Ս. Հաղորդության պահը: Ապա լսվում է սարկավագի «Զդրունս, զդրունս...» զգուշացնող հրամանը, որով կոչ է արվում փակել մեր մտքի, սրտի խորհուրդների դռները և կենտրոնանալ փրկագործության խորհրդի վրա: Այս ընթացքում պատարագիչն անձայն աղոթում և փառաբանում է Հայր Աստծուն՝ փրկագործական տնօրենության միջոցով հրեշտակների հոգևոր ուրախությանը մեզ մասնակից դարձնելու համար: Ուստի սերովբեների և քերովբեների հետ միաձայն մենք ևս համարձակաձայն երգում ենք՝ «Սուրբ, սուրբ, սուրբ...»:

Սրբասացության ընթացքում պատարագիչը բազկատարած լռելյայն աղոթում է Հայր Աստծուն՝ փառաբանելով Նրան, Ով երբեք չանտեսեց մեզ՝ մարդկանցս, և մեր մեղքերի քավության ու սրբության համար Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց: Ապա պատարագիչը բացում է սկիհը, վերցնում նշխարը և բարձրաձայն կրկնում Հիսուս Քրիստոսի՝ Վերնատանը Հնչած խոսքերը. **«Առէք, կերէք, այս է Մարմին Իմ...»**: *Այնուհետև բարձրացնում է սկիհը՝ ի տես ժողովրդի, և ասում.* **«Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է Արիւն Իմ Նո-**

ոոյ Ուխտի...»: *Պատարագիչը քողով ծածկում է սկիհը և ապա ընծաները փոքր ինչ բարձրացնելով՝ դիմում է Հայր Աստծուն՝ ասելով բարձրաձայն.* «**Եւ զՔոյս ի Քոյոց Քեզ մատուցանեմք...**»: *Այսինքն՝ Հիսուս Քրիստոս՝ Աստծո Որդին, որ Հայր Աստծուց ելնելով Հոր և Սուրբ Հոգու կամքով աշխարհ եկավ, այժմ էլ նույն Աստծո Որդուն մատուցում ենք Իրեն՝ Հայր Աստծուն, Հանուն մարդկության փրկության:*

Այն ժամանակ, երբ երգչախումբը երգում է «**Յամենայնի օրհնեալ ես**» *երգը, պատարագիչն անձայն աղոթում և երեքական անգամ օրհնում է նշխարն ու գինին՝ առանձին, ապա երեք անգամ նշխարն ու գինին՝ միասին: Եթե մինչ այդ հացն ու գինին խորհրդանշում էին Քրիստոսի Մարմինն ու Արյունը, ապա այս պահից սկսած՝ Սուրբ Հոգու ներգործությամբ, հացն ու գինին սրբագործվում են՝ դառնալով Տիրոջ ճշմարիտ Մարմինն ու Արյունը:*

Հիշատակություն

Պատարագիչն անձայն աղոթում է՝ խնդրելով, որ սրբագործված ընծաների միջոցով Աստված սեր ու խաղաղություն պարգևի համայն աշխարհին և Իր Ս. Եկեղեցուն՝ հոգևորական և աշխարհական դասով: Այնուհետև սկսվում է սրբոց հիշատակությունների շարքը: Այդ պահին սարկավագներն ու դպիր-

ներն անցնում են Խորանի աջ կողմը, որը խորհրդանշականորեն Քրիստոսի Հաղթական Եկեղեցու անդամների՝ սուրբերի աջակողմյան դասին պատկանելությունն է ցույց տալիս: Ավարտին սարկավագներն անցնում են Ս. Սեղանի ձախ կողմը՝ այս անգամ հիշելու Զինվորյալ Եկեղեցու անդամներին՝ ապրող հավատացյալներին:

*Մեր Եկեղեցում, ընդունված կարգի համաձայն, հիշատակությունից և «***Եւ ևս խաղաղութեան** ...» *երգեցողությունից հետո Ս. Պատարագն ընդհատվում է, և պատարագիչն իր քարոզը կամ պատգամն է հղում ներկա հավատացյալներին՝ ըստ օրվա ավետարանական ընթերցանության որևէ հատվածի: Հավարտ քարոզի պատարագիչը բարձրաձայն ասում է՝ «***Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով...**» աղոթքը, և Եկեղեցին միաբերան սկսում է երգել Հայր մերը:*

Խաչակում

Պատարագիչը, սկիհի առաջ գլուխը խոնարհելով, անձայն աղոթում է Սուրբ Հոգուն՝ խնդրելով, որ Աստված ողորմություն պարգևի Եկեղեցում հավաքված ժողովրդին, ինչին հաջորդում է սարկավագի կոչը՝ «Ռօսխումէ», որով ուշադրության է հրավիրում ժողովրդին՝ տեսնելու Տերունական Մարմինը: Այդ պահին

պատարագիչը, Ս. Մարմինը փոքր-ինչ վեր բարձրացնելով, ասում է՝ «Ի Սրբութիւն սրբոց», այսինքն՝ Սրբությունը՝ սուրբերին: Սա նշանակում է, որ Տիրոջ Ս. Մարմինը միայն պետք է հոգով, մտքով ու սրտով սուրբ ու մաքուր անձանց բաշխել, նրանց, ովքեր մկրտված են Եկեղեցու Ս. Ավազանում և այժմ փափագում են Ս. Հաղորդություն ստանալ:

Պատարագիչն աղոթում է, որ նրանք, ովքեր մոտենալու են Ս. Հաղորդության, արժանի դառնան աստվածային այդ մեծ ու սահավոր Խորհրդին՝ Քրիստոսի Մարմնի և Արյան ճաշակմանը: Ապա պատարագիչը շրջվում է դեպի ժողովուրդը՝ սկիհը ձեռքին, խաչակնքում հավատացյալներին՝ ասելով. «Սա է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն և Թողութիւն մեղաց ...»:

Վարագույրը փակվում է: «Տէր ողորմեա»-ի պահն է: Պատարագիչն անձայն աղոթում է վարագույրի հետևում, ապա Ս. Հացը՝ նշխարը, չորս մասի է բաժանում, երեք մասը թողնում է սկիհի մեջ, իսկ մեկ մասն իր ձեռքն է վերցնում և ասում. «Լրումն Հոգւոյն Սրբոյ»: Պատարագիչը լռելյայն շարունակում է աղոթքը՝ խնդրելով, որ Աստված իրեն և հավատացյալներին արժանի դարձնի Ս. Մարմնի և Արյան Հաղորդությանը:

Պատարագիչը ճաշակում է Ս. Հաղոր-

դությունը, ապա վարագույրը բացվում է, և նրանք, ովքեր նախապես խոստովանել էին ու պատրաստ են Ս. Հաղորդության, մոտենում են Խորանին՝ ճաշակելու Սրբությունը:

Դ. ԱՐՁԱԿՈՒՄ

Գոհություն

Ժողովրդին Ս. Հաղորդություն տալուց հետո պատարագիչը դառնում է դեպի Ս. Սեղան: Խորանը կրկին ծածկվում է վարագույրով: Պատարագիչը ճաշակում է սկիհի մեջ մնացած Ս. Հաղորդությունը, լվանում է սկիհը, մաքրում և ծածկում այն՝ գոհաբանական աղոթք ուղղելով Սուրբ Երրորդությանը: Այնուհետև պատարագիչը սաղավարտը դնում է գլխին և պատրաստվում սարկավագների ու դպիրների հետ իջնել Ս. Խորանից:

Ս. Պատարագի բուն խորհուրդն արդեն ավարտված է, սակայն ժողովրդին արձակելուց առաջ պատարագիչն ընթերցում է Ս. Խորհրդի վերջին Ավետարանը (Հովհ. Ա 1-14), որից հետո ժողովուրդը «Պահպանիչ» աղոթքով օրհնվում և «Օրհնեալք եղերուք» մաղթանքով արձակվում է:



ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հրատարակության պատրաստեց
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Հրատարակչական բաժինը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - 2010

Չափսը՝ 60x84 1/32, ծավալը՝ 4 տպ. մամուլ
(64 էջ), տպաքանակը՝ 10.000:



Տպագրված է Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի Տպարանում